№ 109 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 1891 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 №

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գինու տաքացնելը. Նամակ Բագուից. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էվէլինա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՆՈՒ ՏԱՔԱՑՆԵԼԸ

Գինին տաքացնելու մեքենաները կազմված են 2 գլանաձև մասերից:

Ցիլինդրների մէջ գտնվում է մի օձապտոյտ խողովակ, որը սկսվում է մէկի վերևի մասից՝ իջնում է մինչև հիմքը, նորից դրսի մասով բարձրանում է և մտնում երկրորդի մէջ և ապա դարձեալ իջնում է մինչև հիմքը և վերջանում է ծորակով: Առաջին գլանի (ցիլինդրի) ստորին մասում գտնվում է մի վառարան, որով կարելի է տաքացնել գլանի մէջի ջուրը: Միւս գլանը վերևում գտնված մի այլ խողովակով կարող է լցվել սառը ջրով և ապա ստորին մասից մի երկրորդ ծորակով դարդակվել: Գինին գալիս է առաջին գլանի օձապտոյտ խողովակից իջնում է մինչև ցած և ապա նորից բարձրանում մտնում է երկրորդ գլանի օձապտոյտ խողովակի մէջ և իջնում է մինչև ցած և արդէն մեր նկարագրած ծորակով դուրս է գալիս: Առաջին գլանը լցրած է լինում ջրով, որը տաքանում է ցածում գտնված վառարանով, իսկ երկրորդ ցիլինդրի մէջ լցրած է լինում սառը ջուր, այնպէս որ գինին առաջին գլանի օձապտոյտով անցնելիս տաքանում է, իսկ երկրորդով անցնելիս սառում է:

Արդեօք անհրաժեշտ էր որպէս զի գինին տաքանալուց յետոյ սառէր նախ քան տակառ լցվելը: Կասենք այո և ահա թէ ինչու: Որովհետև տաքացրած գինին օդի ազդեցութեան տակ կորցնում է իր գոյնը և մութ դեղին գոյն է ստանում, որը աչքի համար շատ անդուրեկան է և բացի այդ օդի մէջ մեծ քանակութեամբ գոլորշիացումն է առաջ գալիս, իսկ գոլորշիացող տարրը ալկոհոլն է: Այդ է ահա պատճառը, որ գինին պէտք է սառի մինչև այն ժամանակ, որ նրա ջերմութեան բարեխառնութեան աստիճանը իջնի և հաւասարվի այն սենեակի կամ գինետան ջերմութեան աստիճանին, որտեղ և գինին պիտի պահել:

Միայն մի հանգամանք անյարմարութիւններ է առաջացնում, այն է որ երկրորդ գլանի միջի սառը ջուրը հետզհետէ տաքանում է և այլ ևս անընդունակ է լինում իր դերը կատարել: Ուստի պէտք է շարունակ ջուրը փոխել, իսկ դրա համար յարմար կարող էր լինել գնացկան ջուրը, որը վերևից լցվէր գլանի մէջ և ցածից դուրս հոսէր:

Բայց որովհետև շատ դժուար է միշտ գնացկան ջուր ունենալ, այն էլ որոշեալ բարձրութեան վրա և բացի այդ քանի որ տաքացնելու գործողութիւնը պիտի կատարվի շիրատանը և կամ գինետանը, այն ինչ այդտեղ գնացկան ջուր չի լինի, դրա համար մտածել են ջրի փոխարէն գործածել նոյն իսկ այն գինին, որը պիտի յետոյ տաքացնվի: Այդպիսով ազատվում ենք թէ ջրի ներկայացրած անյարմարութիւններից և դեռ բացի այդ, այն տաքութիւնը, որը դուրս թափվող ջրի հետ պիտի կորչէր, այժմ գործադրվում է և գինին նոյն իսկ երկրորդ գլանի մէջ մի կողմից սառցնում է խողովակով անցնող արդէն տաք գինուն և ապա նոյն ժամանակ տաքանում է և ինքն: Միայն այդ դիպուածում պէտք է մեքենայի կազմուածքը մի քիչ փոփոխութեան ենթարկել, այն է՝ առաջին գլանի մէջ գտնված օձապտոյտ խողովակի ծայրը պէտք է միացնել երկրորդ գլանի ջուր բաց թողնելու ծորակի հետ և բացի այդ՝ երկրորդ գլանը պէտք է աւելի բարձր լինի: Գործողութիւնը պիտի կատարել հետևեալ կերպով: Առաջին գլանը պիտի լցնել ջրով և վառարանը վառել մինչև ջուրը հասնի +78⁰ C. Ապա երկրորդ գլանը պիտի լցնել գինիով, որը կը բարձրանայ և կը մտնի առաջին գլանի օձապտոյտ խողովակի մէջ. այդտեղով իջնելով կը տաքանայ և նորից կը բարձրանայ և կը մտնի երկրորդ գլանի օձապտոյտի մէջ և ցած իջնելով կը սառչի շրջապատող սառը գինու ազդեցութեան տակ:

Այդ մեքենաները պէտք կը գան այն ժամանակ, երբ գործ պիտի ունենանք մեծ քանակութեան հետ: Բայց ինչպէս պիտի վարվել այն ժամանակ, երբ գինին փոքրիկ քանակութեամբ է և տնային գործադրութեան համար:

Այդ ժամանակ պէտք է վերցնել մի կաթսայ, ջուր լցնել մէջը, տաքացնել մինչև +78⁰ C. ապա գինին չիշերի մէջ լցրած, բերանները խցանով ամրացրած դնել մի զամբիւղի մէջ և իջեցնել կաթսայի ջրի մէջ. այնտեղ թողնել մէկ ժամ և ապա տանել գինետուն:

Պէտք է խցանները ամուր լինեն, որովհետև գինին տաքանալով լայնանում է, լայնանում է և խցանի և գինու միջի մասում գտնված օդն ու խիստ ճնշում գործելով դուրս է գցում:

Բազմաթիւ փորձերը և անհամեմատ ընդարձակ գործադրութիւնն ապացուցել է, որ գինու տաքացնելը շատ բարերար ազդեցութիւն է ունենում, քանի որ փչացնում է հիւանդութիւնների ամենատեսակ սերմերը և գինուն ազատ է պահում վտանգից:

Բայց արդեօք տաքացնելն անպայման նպաստաւոր է գինու համար թէ ոչ: Ո՛չ միշտ: Որովհետև եթէ մի կողմից գինին տաքացնելու շնորհիւ հիւանդութիւններից կարող է ազատվել, միւս կողմից էլ նա զրկվում է աղնւանալու և զարգանալու ընդունակութիւնից:

Դրանից հետևում է այն, որ պէտք է տաքացնել միայն սովորական գինիները: Իսկ լաւ գինիները պէտք է միշտ աշխատել ազատ պահել այդ գործողութիւններից. միայն երբ դա միանգամայն անհրաժեշտ է, կարելի է տաքացնել, բայց ոչ մինչև 70⁰ այլ 50⁰:

Գինիները պէտք է տաքացնել նախ քան հիւանդանալը: Եթէ հիւանդութիւնը նոր է սկսված, տաքացնելը կարող է կանգնեցնել նրան, բայց արդէն ինչ չափով որ փչացել է, նրան այլ ևս այդ միջոցը չի ուղղի: Իսկ երբ որ հիւանդութիւնը մեծ ծաւալ է ընդունել, այն ժամանակ տաքացնելը միանգամայն զուր է և ոչ մի հետեւանքի չի հասնի:

Վ. Ադուլիս. Մ. Մուսինեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Սեպտեմբերի 22-ին

Արդէն երրորդ շաբաթն է, որ Կարա-Մուրզան վերադարձել է Պետրովսկից, ուր գնացել էր ամառը:

Գալուն պէս երաժշտութեան այդ սիրահարը սկսեց խմբել, կազմակերպել, կարգի բերել իր երգեցիկ խմբի ցիր ու ցան եղած անդամներին. և ահա խումբը պատրաստ է արդէն. շաբաթը երկու անգամ դարձեալ խմբվում, երգում, պատրաստվում է: Այս տարի խումբն աւելի բազմամարդ է երևում:

30—50, նոյն իսկ 60 անդամներից բաղկացած խումբը, որ տարիների ընթացքում գոյութիւն է ունեցել պարոնի առաջնորդութեամբ և յաջորդաբար էլ փոխարինել է յաջորդը նախորդին, բաղկացած է եղել ամեն տեսակ մարդկանցից, զարգացողութեամբ և արհեստով միանգամայն տարբեր անձերից: Այսօր խմբին մասնակցում է՝ և ուսուցիչ, և ուսանող, և առևտրական, և հաշապահ, և արհեստաւոր, և ծառայող և այլն, և այլն, մի խօսքով ամեն դասակարգից և ամեն տեսակ անձնաւորութիւններից:

Որքան տարբեր ճաշակի, տարբեր պաշտօնների տէրեր էլ լինեն խմբի անդամները, այնու ամենայնիւ նրանք ամենքն էլ, առանց բացառութեան, վերաբերվում են գործին ամենայն սիրով ու սրտով: Ով մի անգամ ընկնում է այդ խմբի մէջ, թէկուզ պատահմամբ, ճաշակում է մասնակցութեան համը, կախարդվում է՝ բառիս բուն նշանակութեամբ. նա այլ ևս յետ մնալ, չը մասնակցել չէ կարող, թէև արգելքներ էլ հանդիպանում լինեն:

Թէ ինչպէս սրտատրոփ կերպով սպասում է 9—10 տարեկան մանուկը շաբաթ երեկոյին, որ գնայ և երգէ, թէ որպիսի անհամբերութեամբ հաշւում է օրերը տգէտ արհեստաւորը, որպէս զի գնայ և լի սրտով երգէ, այդ կարող են զգալ միայն խմբի ներկայ և նախկին անդամները, կամ նրանց մօտիկ գտնվողները, գործին մօտիկ կանգնածները:

Այո, ակներև ճշմարտութիւն, անուրանալի փաստ է, որ պ. Կարա-Մուրզան գիտէ զիւրըմբռնելի, չշափելի դարձնել երաժշտական արհեստը, գիտէ հետաքրքրել, գիտէ դրաւել: Եւ հէնց այդ քնածին ընդունակութեան հետևանք պիտի համարել այն աջողութիւնը, որը զուգընթանում է նրա գործունէութեան բոլոր տեղերում:

Զանազան քաղաքներում նրա կարճ միջոցում կազմակերպած երգեցիկ խմբերը չշափելի գրաւեցայ Ֆրանսիացի նկարիչ Մ-ի հետ, ռուս նկարիչ-բանաստեղծ Իմասօվի հետ, այդտեղ ես առաջին անգամ հանդիպեցի օրիորդ Էվէլինա Պ-ին, որին ինձ ներկայացրին և տանտիկնոջ եղբայր, շվեդացի բարեկամս Կ., որը չէր սիրում առանց թողնել մի հանաք անելու համար, օրիորդի ձեռքից բռնելով, աւելացրեց. «դուք տեսնում էք ձեր առջև ֆրանսիական երաժշտական աշխարհի ապագայ պայծառ աստղերից մինին:»

Էվէլինա գեղեցկուհի էր այդ բառի բուն նշանակութեամբ. դէմքի շատ նուրբ գծագրութիւնների ու երեսի մորթիի սպիտակ գոյնի հետ, նա իր սև յօնքերի տակ ունէր Միջերկրական ծովի ջրի պէս կապոյտ արտայայտիչ աչքեր, չքեղ շագանակագոյն մազեր, փոքր ինչ հաստ, բայց հրապուրիչ շրթունքներ, դրա հետ միասին և վերին աստիճանի շնորհալի կազմուածք ու քայլուածք.... Նրա դէմքի գծագրութիւնը փոքր ինչ հրէական էր.... Առաջին անգամ ես միջոց չունեցայ խօսել նրա հետ. կարծեմ նա ինձ վրա ուշադրութիւն էլ չը դարձրեց. նա եկել էր յայտնելու Դ. ամուսիններին թէ միւս օրը լինելու է իր կօնցերտը «Cercle Massena» ասված ժողովարանի դահլիճում:

Երբ նա սկսեց խօսել, ականջիս դիպաւ վերին աստիճանի մեղմ, ներդաշնակ ձայնի հնչիւնը:

Միւս օրը մենք բոլորս կօնցերտումն էինք: Ժողովարանի ահագին և չքեղ դահլիճը լի էր ամեն տեսակ ազգութիւններին պատկանող հասարակութեամբ: Դահլիճում բառի բուն նշանակութեամբ ասեղ գցելու տեղ չը կար: Էվէլինա Պ. ածում էր Մենդէլսօնի, Շումանի, Վագնէրի, Շոպէնի պիէսաները, ածում էր սոլո և օրկէստրի դաշնակցութեամբ: Վերջին տեսակի պիէսաները նա անգիր չէր ածում, այլ նոտաներով. այն ժամանակ ամբողջ Նիցցայում յայտնի ռուս գեղեցիկ իշխանուհի Ս. բարձրանում էր բեմը, նրստում էր օրիորդի կողքին և դարձնում էր նոտաների երեսները....

Ես առաջին անգամ էի լսում օրիորդի ածելը. նա ածում էր սքանչելի կերպով. մատների տէխնիկան աննման էր, փոքրիկ ձեռքերի ոյժը աներևակայելի էր.... Դա կանացի ածելը չէր, այլ տղամարդու ածելն էր: Ֆրանսիացիք Նապոլէօն III-ի ժամանակ նոր էին ծանօթանում Վագնէրի երաժշտութեան հետ. Լիստի փոխադրած Վագնէրի երաժշտութիւնը օրիորդն աննման կերպով կատարեց, բայց Շոպէնի պիէսաները նա կատարեց թոյլ և անկենդան կերպով:

Հետևեալ առաւօտը Նիցցայի «Phare du Littoral» լրագիրը տպում էր մի վերին աստիճանի գովասանական, նոյն իսկ ոգևորված քննութիւն օրիորդի ածելու մասին, բայց աւելացնում էր. «Չենք կարող չը նկատել, որ Շոպէնի պիէսաները չնորհալի արտիստուհին ածում է թոյլ և անկենդան կերպով, սակայն դա հասկանալի է. Շոպէնին ըմբռնելու և նրա գրուածներն արտայայտելու համար հարկաւոր է կեանքի աւելի մեծ փորձառութիւն ունենալ և աւելի հասակով լինել, իսկ տաղանդաւոր պիանիստուհին, որքան մեղ յայտնի է, հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՎԷԼԻՆԱ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻԴ

(ՀԱՅԵՐԷՆ ՄԻ ԱՆՏԻՊ ՁԵՌԱԳՐԻՑ)

Գարունը սկսվել էր և տարվայ այդ եղանակի հետ միասին սկսվել էին շոքերը Նիցցայում: Միջերկրական ծովի Corniche ասված ամբողջ ափերը, Նիցցայից սկսած գրեթէ մինչև Ջենօվա քաղաքը որքան գեղեցիկ է ձմեռ ժամանակ, այնքան էլ անտանելի շոք և նոյն իսկ անառողջ կլիմա ունի գարնան և ամառ ժամանակ: Բժիշկների խորհրդով պէտք է փախչէի Նիցցայից: Քաղաքը թողնելուց առաջ ես ուզեցի հանել տալ լուսանկարս, որպէս զի իմ կենդանագիրս ուղարկեմ Կ. Պօլիս, ծնողներիս, նրանց ցոյց տալու համար թէ առողջացել եմ: Բայց երբ ստացայ լուսանկարս, զարմացած մնացի.... Մի՞թէ ես այդ աստիճան չաղացել էի.... Ես աչքերիս չէի հաւատում.... Ուրեմն ես կատարելապէս առողջ եմ, մտածեցի ես, ուրեմն և կարող եմ այստեղ, արտասահմանում, շարունակել և աւարտել համալսարանական ուսումս:

Այժմ համոզվելով թէ կատարելապէս առողջ եմ, և վճռելով դարձեալ մի երկու շաբաթ մնալ Նիցցայում, ես սկսեցի յաճախել թատրոն, կօնցերտներ, վերջապէս քնակարանիս այդիում հանդիպելով նոյն տան կենողներին, երկու շվեդացի երիտասարդներին, ինքս մօտեցայ նրանց, ծանօթութիւն կապեցի նրանց հետ, բացատրելով նրանց թէ հիւանդութիւնս էր պատճառը, որ եօթ ամիս շարունակ մի և նոյն տան մէջ կենալով, ես խուսափում էի որ և է ծանօթութիւն կապելուց: Մենք շատ շուտով բարեկամացանք և երիտասարդները սիրով յանձն առան այդ երկու շաբաթվայ ընթացքում ընկերակից լինել ինձ թէ թատրոնի և թէ կօնցերտների այցելութիւններում: Բժիշկը խորհուրդ էր տուել ինձ երկու շաբաթից յետոյ գնալ Շվէյցարիա և այնտեղ անցկացնել ամառը: Ես վճռել էի գնալ Ցիւրիխ, որտեղ կարող էի համալսարանական դասախօսութիւններին էլ հետևել: Որքան էր ուրախութիւնս երբ իմացայ թէ իմ նոր բարեկամներս էլ ուղիղ երկու շաբաթից յետոյ նմանապէս Շվէյցարիա են ուղևորվում: Շվեդացի բարեկամներիցս մէկը, Կ., հետևեալ օրն արդէն տարաւ ինձ իր քրոջ տունը. տիկինը մի ֆրանսիացի յայտնի նկարչի, պ. Դ-ի կինն էր:

Դ-ի տունը մի ճակատագրական ներգործութիւն պիտի ունենար իմ ամբողջ կեանքիս վրա. այդտեղ ամեն օր հաւաքվում էին ամեն ազգութիւններին պատկանող գեղարուեստագէտներ՝ նկարիչներ և երաժիշտներ, այդտեղ ես ծանօթացայ Ֆրանսիացի նկարիչ Մ-ի հետ, ռուս նկարիչ-բանաստեղծ Իմասօվի հետ, այդտեղ ես առաջին անգամ հանդիպեցի օրիորդ Էվէլինա Պ-ին, որին ինձ ներկայացրին և տանտիկնոջ եղբայր, շվեդացի բարեկամս Կ., որը չէր սիրում առանց թողնել մի հանաք անելու համար, օրիորդի ձեռքից բռնելով, աւելացրեց. «դուք տեսնում էք ձեր առջև ֆրանսիական երաժշտական աշխարհի ապագայ պայծառ աստղերից մինին:»

Էվէլինա գեղեցկուհի էր այդ բառի բուն նշանակութեամբ. դէմքի շատ նուրբ գծագրութիւնների ու երեսի մորթիի սպիտակ գոյնի հետ, նա իր սև յօնքերի տակ ունէր Միջերկրական ծովի ջրի պէս կապոյտ արտայայտիչ աչքեր, չքեղ շագանակագոյն մազեր, փոքր ինչ հաստ, բայց հրապուրիչ շրթունքներ, դրա հետ միասին և վերին աստիճանի շնորհալի կազմուածք ու քայլուածք.... Նրա դէմքի գծագրութիւնը փոքր ինչ հրէական էր.... Առաջին անգամ ես միջոց չունեցայ խօսել նրա հետ. կարծեմ նա ինձ վրա ուշադրութիւն էլ չը դարձրեց. նա եկել էր յայտնելու Դ. ամուսիններին թէ միւս օրը լինելու է իր կօնցերտը «Cercle Massena» ասված ժողովարանի դահլիճում:

Երբ նա սկսեց խօսել, ականջիս դիպաւ վերին աստիճանի մեղմ, ներդաշնակ ձայնի հնչիւնը:

Միւս օրը մենք բոլորս կօնցերտումն էինք: Ժողովարանի ահագին և չքեղ դահլիճը լի էր ամեն տեսակ ազգութիւններին պատկանող հասարակութեամբ: Դահլիճում բառի բուն նշանակութեամբ ասեղ գցելու տեղ չը կար: Էվէլինա Պ. ածում էր Մենդէլսօնի, Շումանի, Վագնէրի, Շոպէնի պիէսաները, ածում էր սոլո և օրկէստրի դաշնակցութեամբ: Վերջին տեսակի պիէսաները նա անգիր չէր ածում, այլ նոտաներով. այն ժամանակ ամբողջ Նիցցայում յայտնի ռուս գեղեցիկ իշխանուհի Ս. բարձրանում էր բեմը, նրստում էր օրիորդի կողքին և դարձնում էր նոտաների երեսները....

Ես առաջին անգամ էի լսում օրիորդի ածելը. նա ածում էր սքանչելի կերպով. մատների տէխնիկան աննման էր, փոքրիկ ձեռքերի ոյժը աներևակայելի էր.... Դա կանացի ածելը չէր, այլ տղամարդու ածելն էր: Ֆրանսիացիք Նապոլէօն III-ի ժամանակ նոր էին ծանօթանում Վագնէրի երաժշտութեան հետ. Լիստի փոխադրած Վագնէրի երաժշտութիւնը օրիորդն աննման կերպով կատարեց, բայց Շոպէնի պիէսաները նա կատարեց թոյլ և անկենդան կերպով:

Հետևեալ առաւօտը Նիցցայի «Phare du Littoral» լրագիրը տպում էր մի վերին աստիճանի գովասանական, նոյն իսկ ոգևորված քննութիւն օրիորդի ածելու մասին, բայց աւելացնում էր. «Չենք կարող չը նկատել, որ Շոպէնի պիէսաները չնորհալի արտիստուհին ածում է թոյլ և անկենդան կերպով, սակայն դա հասկանալի է. Շոպէնին ըմբռնելու և նրա գրուածներն արտայայտելու համար հարկաւոր է կեանքի աւելի մեծ փորձառութիւն ունենալ և աւելի հասակով լինել, իսկ տաղանդաւոր պիանիստուհին, որքան մեղ յայտնի է, հա-

ականներ են.—Շահլամեան, Ամիրջանեան մի-մի կոթողներ են նրա անխոնջ աշխատանքի,—Ծովական, Ասրիեանց և ներկայումս էլ Աբրահամեան, որը մի հասարակ արհեստաւոր է, կենդանի վկաներ են նրա հմտութեան....

Եւ ահա այն անխոնջ մշակը, որ հոգու ամբողջ անկեղծութեամբ աշխատում է, այն մարդը, որ առանց մի կօպէկի ակնկալութեան ձգտում է օգտակար լինել, մենք նրան անտես ենք անում, կարծես չենք տեսնում.... Ուրիշ քաղաքներից ահագին ծախսեր են յանձն առնում, հրաւիրում, որ գոնէ մի ամսով գնայ այնտեղ և եկեղեցիների համար խմբեր կազմակերպէ, իսկ մեզանում ոչ միայն չեն մտածում հրաւիրելու, այլ նոյն իսկ նրա ձրի ծառայութիւնից, ցոյց տուած պատրաստակամութիւնից անգամ անկարող են գտնվում օգտվելու:

Ուրիշ քաղաքներում թերևս գիւտ կը համարեն մի այնպիսի հմուտ ուսուցչի մուտք գործելը դպրոցներում, իսկ մեզանում ուսումնարանների երգեցողութիւնը տիրացուներին է վերապահված:

Այսպէս թէ այնպէս մենք անշնորհ ենք, չը գիտենք գնահատել այդ շնորհալի ուսուցչին. սակայն որքան անշնորհ լինենք, այնու ամենայնիւ պիտի աշխատել, պիտի օժանդակել, պիտի աջակցել նրան, որ կարողանայ գտնէ իր նպատակները իրագործած տեսնել ուրիշ օտարազգի գնահատողների միջոցով:

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ պարոնին եկող 1892 թուականից հրաւիրում են իր խմբով կօնցերտներ տալու Ռուսաստանի, Գերմանիայի ու Աւստրիայի զանազան քաղաքներում: Թէև դեռ պայմանները վերջնականապէս աւարտված չեն, սակայն աւելի քան հաւանական է, որ աւարտվեն աջող կերպով:

Արտասահմանի և Ռուսաստանի հարիւրաւոր քաղաքներում երգեցիկ խումբը հայկական կօնցերտներ պիտի տայ, հայ լեզուն, հայ ազգը իր հոգեկան-պատմական ներքին աշխարհով հանդէս պիտի գայ, թերևս այնպիսի քաղաքներում, ուր գաղափար անգամ չը կայ հայութեան մասին,...

Ակներև է, որ որքան պ. Կարա-Մուրզան միջոց ունենայ խումբը լաւ այժերից կազմակերպելու, որքան հանդէս գան բանիմաց աջակիցներ՝ երգերը դասաւորելու, ընտրելու, խմբի անդամների համար համապատասխան հանդերձներ՝ պատմական ու ժողովրդական—որոշելու, այնքան աւելի նպատակայարմար ու արդիւնաւէտ հետեւանք կունենայ:

Պ. Կարա-Մուրզային այս բոպէիս, ինչպէս իմացանք, ոչինչ այն աստիճան չէ զբաղեցնում այդ մասին, որքան կանանց և օրիորդների բացակայութիւնը, խմբին չը մասնակցելը: Այս բոպէիս խմբում կանանց և օրիորդների փոխարէն տղաներ են երգում. ի հարկէ, որքան խնամքով մշակված և յարմարեցրած լինեն, այնու ամենայնիւ այն ներդաշնակութիւնը չունի, ինչ որ յատուկ է գեղեցիկ սեռի երգեցողութեան:

Իր այդ երաժշտական ուղևորութիւնը կատարելու համար, ինչպէս ասում են, պարոնը մտադիր է խմբի անդամների քանակութիւնը սահմանափակել 40-ով, որոնցից 10—12 հոգի պիտի լինեն օրիորդներ և կանայք. վերջինների համար կասկածում է, աչքի առաջ ունենալով հայ ընտանիքի, հայ հասարակութեան ողորմելի կարծիքը իգական սեռի, նրա կոչման ու հասարակական գործունէութեան վերաբերեալ:

Ցիրաւի, մինթէ այն աստիճան թշուառ է հայ օրիորդի, կամ կնոջ դրութիւնը, որ անկարելի է ինքնուրոյն կերպով ապրել, գործել հասարակական որ և է ասպարիզում. մինթէ չեն գտնվի 10—15 հոգի նախապաշարմունքներից ազատ հայ օրիորդներ ու տիկիններ, որոնք կանոնաւոր ռոճիկ ստանալուց զատ, ուրախ լինեն և միանգամայն կարող ձրի ճանապարհորդութիւններ անել, արտասահման գնալ, քաղաքներ տեսնել և փոքր ի չատէ ծառայութիւն մատուցած լինել....

Կարծեմ միակ դժուարութիւնը, որ կարող է զգալի խոչնդոտ հանդիսանալ—այդ այս դէպքում երգեցիկ կանանց ու օրիորդների խնդիրը պիտի լինի, իսկ ինչ վերաբերում է ճանապարհորդութեան ուրիշ դժուարութիւնների, զգալի ոչինչ չը պիտի լինի, մանաւանդ ունենալով Կարա-Մուրզայի պէս մի առաջնորդ, որը բացի ռուսերէն և հայերէն խօսելուց, խօսում է գեղեցիկ կերպով և ֆրանսերէն, և գերմաներէն, և իտալերէն:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարից սկսում ենք տպագրել «Էվէլինա» վերնագրով Գրիգոր Արծրունու հոգեբանական էտիւդը: Այդ գրուածքը կը տպագրվի 9 թէ 10 համարում:

—

Սեպտեմբերի 26-ին, հինգշաբթի օր, կայացաւ Թիֆլիսի Միքայէլեան տեխնիական երկաթուղային դպրոցում տարեկան ակտ: Մաղթանքներից յետոյ դպրոցի կառավարիչ պ. Բօդէնակի կարդաց դպրոցի անցեալ տարվայ հաշիւը: Այդ դպրոցում ընդունվում են 14 տարեկանից սկսած մինչև 17 տարեկան աշակերտներ. դպրոցն ունի և գիշերօթիկներ, որոնց թիւն է այժմ 29 հոգի: Դպրոցն ունի 7227 րուբլի պահեստի գումար: Անցեալ տարի դպրոցում ուսանում էին 60 հոգի աշակերտներ. իսկ այս տարի աշակերտների թիւը 72 է, որոնցից ռուսները 28 հոգի են, վրացիք՝ 16, հայեր՝ 18, լեհացիք՝ 3, գերմանացիք՝ 2 և հրէաներ 5 հոգի: Այս տարի դպրոցում ոչ մի մահմեդական չէ սովորում. իսկ անցեալ տարի դպրոցն ունէր 1 մահմեդական աշակերտ, որը և աւարտեց ուսումը: Այս տարի աւարտողների թիւը 12 էր, որոնցից 3 հոգի հայեր էին: Հաշուի ընթերցումից յետոյ, աշակերտները սկսեցին խորով երգել և պէտք է խոստովանվել, որ երգեցիկ խմբի կառավարիչը շատ մեծ խնամքով է վարժեցրել աշակերտներին երգեցողութեան մէջ. երգեցողութիւնը վերին աստիճանի ներդաշնակ էր: Ապա հանդէսին ներկայ գտնված փոքրաթիւ հիւրերը, որոնց թւում կային և բարձրաստիճան անձինք, նախաշաճիկի հրաւիրվեցան: Աշակերտների աշխատանքների բաղմաթիւ նմուշներ, որոնք հանդէս էին դրված դպրոցի սրահներում, վերին աստիճանի նպաստաւոր տպաւորութիւն են գործում այցելուի վրա:

—

Հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին Թիֆլիսի քաղաքային թատրոնում հայոց թատրոնական խումբը ներկայացրեց Մոլիէրի «Տարտիւֆ» աշխարհաբարեալ պիէսան: Խաղը փոքր ինչ ձանձրալի էր, կենդանութիւն չը կար նրա մէջ և պիէսան ընդհանրապէս առանց աշխոյժի անցաւ, մանաւանդ որ դերակատարներից շատերը դերերը չը գիտէին: Տեղ տեղ լաւ էին Վրոյը (Օրգոնի դերում) և օրիորդ Վարդուհի (աղախնու դերում): Շնորհակալութիւն տիկին Սիրանուշին. նա ազացուցեց մեզ, որ խելօք կին է և խելօք դերասանուհի: Մեր արած նկատողութիւնը ոչ թէ վիրաւորեց նրան, այլ ընդհակառակն ուղղեց. այս անգամ շնորհալի տիկինը խօսում էր մեզ հետ մաքուր, պարզ և որոշ հայերէն լեզուով: Թատրոնը գրեթէ լի էր:

—

Խմբագրութեանս մէջ ստացվեց Վիէննայի Մխիթարեան ուխտի վարդապետ հ. Թադէոս Թոռնեանի կազմած «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց հանդերձ ծանօթութեամբք ի պէտս յառաջադէմ աշակերտաց» ձեռնարկը, երկրորդ տպագրութեամբ: Գիրքը տպված է Վիէննայի Մխիթարեան տպարանում 1891 թվին: Հ. Թոռնեանի այդ աշխատութիւնը, որը գործ է ածվում Թիւրքիայի հայ դպրոցներում, սպառված էր: Այժմ հայը սուրբը երկրորդ տպագրութեամբ հրատարակելով իր ձեռնարկը, հաստատեցրել է նրան բաղմաթիւ օգտակար ծանօթութիւններով, որոնք մեծ դիւրութիւն կը տան գրաբար լեզուն ուսումնասիրող հայ աշակերտներին: Գիրքն արժէ 2 ֆրանկ:

—

Ստացանք հ. Յովսէփ վարդապետ Գաթրճեանի «Հանդանակ Հաւատոյ որով վարի Հայաստանեայց եկեղեցի, քննութիւն հանդանակին ծագման, հեղինակին և ժամանակին վրա» բրոշիւրը: Վերոյշեալ բրոշիւրով, որ հանդուցեալ Գաթրճեան գրել է, որպէս նրա հրատարակիչն է ասում, սրանից մօտ 21 տարի առաջ, աշխատում է ապացուցանել, թէ մեր գործածած հանդանակի ծագումը ոչ թէ հայկական է, այլ յունական: Բացի դրանից, հարկաւոր ենք համարում յիշեցնել մեր ընթերցողներին, որ 1865 թուին հ. Յովսէփ Գաթրճեան և Մսեր մագիստրոս Մսերեանց երկար բանակռիւ ունէին կաթոլիկ եկեղեցու վարդապետութեան և հայ-լուսաւորչական վարդապետութեան տարբերութեան մասին: Մսեր մագիստրոս Մսերեանց հանդանակի մասին ևս մի քննութիւն ունէր գրած, որին չէր կարողացել իր ժամանակ պատասխանել հ. Գաթրճեան, և ահա վերոյիշեալ բրոշիւրով հ. Գաթրճեան կարողանում է լցնել իր սրտի փափաքը, աշխատելով ջրել Մսեր մագիստրոսի մաքերը: Բրոշիւրը տպված է Վիէննայում, Մխիթարեանց տպարանում, 1891 թուին, և արժէ 1 ֆր. 40 սանտիմ:

—

Մի գրքոյկ ևս ստացանք Վիէննայից, այն է «Արեւելեան հաւք ի Պուքովինա», գործ Դեմիտրիս Տանի, որ թարգմանել է Մխիթարեան ուխտի միաբան հ. Գրիգոր վ. Գալէմքեարեան: Թարգմանիչ վարդապետը իր առաջաբանի մէջ ասում է հետեւեալը. «Մատեանս թարգմանութեամբ հասարակութեան ներկայացնելով, չենք ուզած ընաւ բովանդակութեանն լիովին հաւանութիւն ընծայել: Մասնաւոր և կարևոր գործ մը երևցած է մեզ երկասիրութիւնս, որ իւր նոր և բաղմակողմանի տեղեկութիւններով Պուքովինայի հայ գաղթականութեան պատմութեան ամբողջական սաուերագիծը կը պարզէ ընթերցողին առջև: Հեղինակն չը միացեալ յունադաւան եկեղեցական ըլլալով՝ բնական է որ տեղ տեղ համեմատ չի խօսիր ազգին մերթ մէկ և մերթ միւս մասին կրօնական զգացմանց»: Գրքոյկը տպված է Վիէննայում, Մխիթարեան տպարանում, 1891 թուին և արժէ 85 սանտիմ:

—

Պետական խորհրդի ներկայ նստաշրջանում, «Нов. Время» լրագրի խօսքերով, պետական խորհրդի քննութեանը կառաջարկվի մի նոր կանոնադրութիւն ամենայն հայոց կաթողիկոսի դէպի բարձր կառավարութիւնը ունենալի յարաբերութիւնների մասին, որ մշակվել է ներքին գործերի մինիստրութեան օտար դաւանութիւնների հոգևոր գործերի դէպարտամենտում:

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ Կովկասի պ. կառավարչապետի Թիֆլիս վերադարձը սպասվում է հոկտեմբերի 4-ին:

—

Լսում ենք որ սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օր, կայանալու է Թիֆլիսի քաղաքային թատրոնում հայ երիտասարդ երգիչ-բարիտոն, պ. Եղիազարեանցի կօնցերտը: Հաւատացած ենք որ մեր հայ հասարակութիւնը կը հետաքրքրվի.

ղիւ քսան և երկու տարեկան կը լինի: Շոպէնին ըմբռնելու և նրան արտայայտելու համար՝ հարկաւոր է սիրել և տանջվել:»

—

Նիցցա թողնելու օրը հասաւ: Ես իմ նոր բարեկամներիս խօսք էի տուել նրանց ճանապարհորդակից լինելու: Գնացքի դուրս գալու ժամին հաւաքվել էինք բոլորս քաղաքի հոյակապ երկաթուղային կայարանում: Մեր փոքրիկ շրջանը վեց հոգուց էր բաղկացած՝ Դ. ամուսիններ, տիկին Դ-ի եղբայր շվեդացի Կ., նրա բարեկամ Ց., օրիորդ Էվէլինա և ես: Մենք բռնեցինք մի ամբողջ կուպէ վագոնի մէջ: Ինձ վիճակվեց նստել ուղղակի օրիորդի դիմաց.... Ես սաստիկ լաւ տրամադրված էի, շատ էի խօսում և զգում էի թէ վատ չէի խօսում: Եւ խօսում էի զլխաւորապէս օրիորդի հետ: Ես նկատեցի որ մեր բարեկամները մեզ վրա նայելով՝ ժպտում, իրար մէջ մեր մասին հանաքներ, նկատողութիւններ էին անում.... Երևի իմ գեղեցիկ խօսակցի վրա նայելով իմ աչքերս չափից դուրս արտայայտիչ էին դարձել, երևի նշմարելի էր լինում իմ հայեացքի մէջ հիացում, զմայլում, և այդ երևի նկատեց սրամիտ Կ. բարեկամս. նա յանկարծ տեղից վեր թռաւ, ձեռքի մի արագ շարժուածքով վերցրեց օրիորդի ծնկների վրա դրված փոքրիկ, նուրբ, թեթև սպիտակ շալը, և ինձ համար բոլորովին անսպասելի կերպով, այդ շալով ծածկեց գլուխս և երեսս ամբողջապէս....

—Է՛հ, ինչ էք անում, ասեցի ես ծիծաղելով ու շալից ազատվելով:

—Մեծ ծառայութիւն եմ մատուցանում ձեզ, երիտասարդ բարեկամս. զլխաբաց նստելով համ գլուխդ կը ցաւի արեգակի ճառագայթներից, համ էլ ափսոս չէն ձեր աչքերը, որոնք կարող են կուրանալ այդ տեսակ լարված հայեացքներից....

Այդ խօսքերին անդուսպ և ուրախ ծիծաղ հետեւեց մեր կուպէում: Սաստիկ ծիծաղում էր և օրիորդը, բայց ես նկատեցի, որ մի թեթև կարմրութիւն ծածկեց նրա սովորաբար գունատ դէմքը:

—

Լիօն քաղաքը հասնելուն պէս, մենք պէտք է բաժանվէինք Էվէլինա Պ-ից: Մեր ամբողջ հասարակութիւնը գնում էր Շվէյցարիա, իսկ օրիորդն ուղևորվում էր Պարիզ և Լօնդօն, այդ երկու մայրաքաղաքներում ամառ ժամանակ կօնցերտներ տալու համար:

Պարիզի գնացքն ուղևորվում էր անմիջապէս, իսկ մեր գնացքը, որը պիտի ուղևորվէր Շվէյցարիա, դեռ ևս քսան բոպէից յետոյ պիտի շարժվէր: Այդպիսով մենք ժամանակ ունէինք ճանապարհ գցել օրիորդին: Նա շտապեց մտնել իր վագոնը և մենք հերթով մօտենում էինք վագոնի պատուհանին և նրա ձեռքը սեղմելով, հրաժարական էինք առնում նրանից: Երբ հերթն ինձ հասաւ և ես մօտեցայ վագոնի պատուհանին, Էվէլինա մեկնեց ինձ իր ձեռքը՝ հրաշալի ժպիտը շրթունքներին և խորին տխրութիւն աչքերում.... Նրա հայեացքը թափանցեց սիրտս: Չը գիտեմ ինչ էր արտայայտում նոյն բոպէին իմ հայեացքը, բայց ինձ թվում էր թէ ես գուշակել էի նրա հոգեկան տրամադրութիւնը.... «Մենակ, միշտ մենակ, առանց սրտակից բարեկամի, առանց կեանքի ընկերոջ, ապրուստ վաստակելու համար միշտ թափառական կեանք վարելու ընտրված, մի բուն, մի սիրուն, հմտեստ, կօկիկ, մշտական բուն չունենալով, որի մթնոլորտն իսկ չնչէր սիրոյ և քնքոյշ անդորրութեան զգացմունքով,—ահա վիճակս....»

Ինձ թվում էր թէ ծովային ջրի գոյնը և ծովի խորութիւնն ունեցող այդ զոյգ հրաշալի աչքերը՝ ուղիղ այդ հոգեկան տրամադրութիւնն էին արտայայտում այն բոպէին.... Իսկ ինքն.... հասկացաւ արդեօք իմ հայեացքն էլ, հասկացաւ արդեօք թէ ես հասկացել էի իրան....

—

Անցան ամիսներ: Ես ուսանող էի գրվել Ցիւրիխի համալսարանում և մեծ աշխատասիրութեամբ և եռանդով էի պարապում: Նոր երկիր, նոր հասարակական պայմաններ, նոր շրջան և նոր մարդիկ՝—այդ բոլորը սաստիկ գրաւում էր ինձ: Ես չէի մոռացել Էվէլինային. նրա դէմքի հրաշալի գծագրութիւնները, նրա կապոյտ աչքերը միշտ կենդանի էին մնում իմ յիշողութեանս մէջ, բայց ես արդէն սկսում էի հաւատալ, որ նրա հետ հանդիպելը մի անցողական, պատահական դիպուած էր, որը ոչինչ հետևանք չի ունենայ իմ կեանքիս համար, ոչինչ ներգործութիւն չի ունենայ իմ վիճակիս վրա: Ես կատարելապէս առողջացած էի զգում ինձ և պարապում էի մեծ եռանդով. ուսանողական զգործունեայ կեանքը կլանել էր ինձ իր մէջ ամբողջապէս: Այդտեղ գրաւում էր ինձ և մի նոր երևոյթ, նոր ոչ թէ միայն ինձ համար, բայց և ամբողջ Եւրոպայի համար.... Ուղիղ այդ ժամանակ երևացին Ցիւրիխի համալսարանում երկու ռուս կանայք, Եւրոպայի համալսարանների առաջին ուսանողուհիներ, կանանց բարձրագոյն կրթութեան մարմնացած կարապետներ.... Ես շտապեցի ծանօթանալ նրանց հետ և այն օրից յաւիտակվեցայ հասարակական նոր իդէաներով: Այդ երկու կանանց շուրջը խմբվում էինք մենք, այլ և այլ ազգութիւններին պատկանող ուսանողներս, նրանք, այդ կանայքն էին, որոնք կազմում էին ուսանողների այդ բոլոր տարբեր խումբեր իրար մէջ կապող օղակը....

Առաւօտները ես լսում էի դասախօսութիւնները համալսարանում, ճաշից յետոյ պարապում էի մասնագիտութեանս, քաղաքատնտեսութեան վերաբերեալ ընթերցանութեամբ, իսկ երեկոյեանները փորձում էի իմ թոյլ ոյժերս հայրենիքիս, Կ. Պոլսի հայոց լրագիրներին թղթակցութիւններ գրելում... Գրուածներս սկսում էին աւելի և աւելի յաճախ երևալ Կ. Պոլսի պարբերական մամուլի էջերում: Ես ուզում էի գրել, միշտ գրել, անընդհատ կերպով գրել,—բայց մի մի անգամ ուղեղի գործողութիւնս կարծես կանգ էր առնում, ես չէի գտնում յարմար նիւթ, ինձ պակաս էին մտքեր....

—

Սեպտեմբեր ամիսն էր: Տաք և պարզ երեկոյ էր: Ես նստած էի իմ փոքրիկ, անշուք, բայց սիրուն և մաքուր ուսանողական սենեակումս և

թանգերին անձամբ ներկայ գտնվելով, համոզվեցու թէ որքան առաջադիմութիւն է արել երիտասարդ երգիչը իր արհեստի կատարելագործութեան մէջ:

—

«Փէրիա» լրագիրը հաղորդում է, որ այն ասորական երկու գեներալները, որոնք եկել էին Թիֆլիս, երեքշաբթի ամսիս 24-ին, ուղևորվեցին դէպի Երևան, Երևանեան Նահանգի զանազան տեղերը ուսումնասիրելու համար:

—

Երեքշաբթի, սեպտեմբերի 23-ին, Թիֆլիսի քաղաքային Դումման իր նիստում որբերի դատարան նախագահ ընտրեց իշխան Իվ. Գ. Մաչաբելին:

—

«Русская Мысль» ամսագրի սեպտեմբերի համարում տպագրված է մեր յայտնի վիպասան հանդուցեալ Բաֆֆիի «Զալալէդդին» վէպի ռուսերէն թարգմանութիւնը:

—

Թիֆլիսի պօստատան մէջ յաճախ են կրկնվում գողութիւնները, մանաւանդ այն ժամանակ, երբ մարդիկ դալիս են փող ստանալու, կամ ուղարկելու. այս օրերս էլ գնդապետ Լօսկովի գրպանից հանեցին բաւական փող, զանազան դօկումենտներ և վէկսելներ:

—

«Правит. Вѣстникъ» լրագրում տպված է, որ վրաց «Թէատրի» անունով լրագիրն ամենօրեայ է դառնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վատիկանը շատ յուզվել է, լսելով որ Ֆլորէնցիայում գումարված իրաւագէտների ժողովը որոշել է ընդունել ապահարզան և մտցնել իտալական օրէնսդրութեան մէջ: Պապական շրջաններում մտածում են ամբողջ Իտալիայում մի շարժում առաջ բերել, որպէս զի պատգամաւորների ժողովը մերժէ այդ առաջարկը:

—Հրէաների ազատութեան հարիւրամեայ տարեդարձը Ֆրանսիայում, որը լրացաւ սեպտեմբերի 15-ին (27-ին), առիթ տուեց ֆրանսիական մամուլին մի շարք համեմատութիւններ անել անցեալի և ներկայի մէջ: «Journal des Débats» լրագիրը այդ առիթով ասում է. «Սեպտեմբերի 15-ին (17-ին) լրացաւ 100 տարին այն ժամանակից, երբ ֆրանսիական առաջին հանրապետութեան ներկայացուցիչների ժողովը վճռեց ազատութիւն տալ հրէաներին, մնացած ֆրանսիացիներին հաւասար թէ քաղաքացիական և թէ քաղաքական իրաւունքներ տալով նրանց: Մեր երկիրը առաջինն էր եւրօպական պետութիւններից, որին վիճակվեց այդ արդար քայլն անել և ֆրանսիական ընտանիքի բոլոր զաւակների համար հրատարակել խղճի ազատութիւնը: Վերջը ուրիշ ազգերն ևս այդ շաւղով սկսեցին ընթանալ, բայց համարձակ կարելի է ասել, որ 1791 թ-ի սեպտեմբերի 15-ի հրովարտակը նշան էր հրէական ցեղի ազատութեան համար: Մենք կարող ենք նոյնպէս վկայել, որ Ֆրանսիայում իսրայէլացիները վայելում են անձնական կատարեալ ապահովութիւն և հաւասար իրաւունքներ: Մէկ ամբողջ դար անցնելուց յետոյ վերոյիշեալ հրովարտակում ոչ մի փոփոխութիւն արված չէ և նրա յայտնած սկզբունքը մեր օրէնսդրութեան, և ինչ որ մանաւանդ նշանաւոր է, մեր բարքերի հիմնաքարը դարձաւ: Պէտք է նոյնպէս ասել, որ իսրայէլացիներն ևս, իրանց կողմից, կատարելապէս արդարացրին այն յոյսերը, որ մեծահոգութեամբ դրել էր նրանց վրա մեր մեծ ժողովը: Վայելելով նոյնպիսի իրաւունքներ, որպէս և մընացած ֆրանսիացիները, նրանք չը խախտեցին ոչ մէկն այն պարտաւորութիւններից, որով կապված էին այդ դրութեան հետ, և աշխատում էին ծառայել երկրին իրանց աշխատանքով, իրանց խելքով և իրանց ազգասիրութեամբ»:

—«Արևելքի» մէջ կարդում ենք. «Վսեմ. Միքայել էֆէնտի Փորթուգալ, որ, ինչպէս կերևի այս աւուր պաշտօնաքաշութեանց ցուցակէն, կայսերական անձնական Գանձուն նախարար անուանուած է, երէկ առաւօտ թիկնապահի մը միջոցաւ կայս. պալատ հրաւիրուելով՝ արժանացաւ վեհ. սուլթանի մեծարանաց: Վսեմ. Միքայել էֆէնտի երէկ հանդուցեալ Ցակոբ փաշայի ապարանքն երթալով ի Եէնի-գիւղ, իւր ցաւակցութիւնն յայտնելէ յետոյ, ստացաւ Ցակոբ փաշայի պաշտօնական կնիքն ու թուղթերն: Վսեմ. Միքայել էֆէնտի երէկ իւր նոր պաշտօնի գլուխն անցաւ և ընդունեց Խազինէի Խասսայի պաշտօնէութեան շնորհաւորութիւնները:»

—Վանից գրում են «Սասահ» լրագրին. «Այդ քաղաքէն վեց-եօթ ժամ հեռուն և Արճէշի մէջտեղը գտնուած Շեյխ Զէնկիլ անուն տեղը՝ Արճէշի հեռագրական բարապաններէ մին հեռագրական դերաններու նորոգութեամբ զբաղած պահուն, հեծեալ եօթն աւազակներ այդ բարապանին վրայ յարձակել և ժամացոյցն ու ձին յափշտակելէ յետոյ փախեր են: Տեղական կառավարութիւն իմանալով անմիջապէս ոստիկան-զինուոր զրկեր է այդ աւազակները ձերբակալելու համար: Բնականաբար, կը յարէ «Սասահ», այդ աւազակներ ի մօտոյ պիտի ձերբակալուին:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի լրագիրներում տպված են միօրագրութեան հետևանքները՝ Պարիզում ապրող օտարազգիների վերաբերմամբ: Ֆրանսիայի մայրաքաղաքում ապրում են 90,806 օտարազգի տղամարդիկ և 90,156 օտարազգի կանայք, որոնցից 5,125 ռուս տղամարդիկ և 4,159 ռուս կանայք են բընակվում Պարիզում:

*
* *

Սեպտեմբերի 30-ին Գերմանիան տօնում է «Կախարդական սրինգի»—Մօցարտի վերջին օպերայի—հարիւրամեայ յօբելեանը:

„Մ Շ Ա Կ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի: Վօլժսկո-Կամսկի բանկի խորհուրդը հաստատեց բանկի վարչութեան առաջարկութիւնը՝ նուիրել յօգուտ սովեալների 30,000 բուբլի:—Լրագիրները հաղորդում են, որ ներկայ սեզօնում պարահանդէսներ չեն լինելու Բարձրագոյն Պալատում և այդ պարահանդէսները կազմակերպելու համար նշանակված գումարները, Թագաւոր Կայսրի կամքով, կուղարկվեն յօգուտ սովեալների:

ՎԻԵՆՆԱ, 23 սեպտեմբերի: Երէկ Մէյկ քաղաքում հանդիսաւոր կերպով օծվեց նոր արձանը, որ կառուցված է Թագաւոր Կայսրի միջոցներով այն ռուս զինուորների գերեզմանի վրա, որոնք սպանվել են 1805 թ-ին: Օծման ժամանակ ներկայ էին ռուսաց հաւատարմատարը և զինուորական գործակալը, նոյնպէս և աւստրօ-ունգարական զօրքերի պատգամաւորութիւնը, որոնց ղեկավարը հաւատացնում էր, որ աւստրիացիները միշտ կը պահպանեն 1805 թ-ին մեզ հետ միասին պատերազմող ռուսաց քաջ զինուորների գերեզմանները:

ԼՕՆԴՕՆ, 23 սեպտեմբերի: Աֆղանական էմիրը ամենևին աչք չունի Վախանեան խանութեան վրա և սառնասրտութեամբ է վերաբերվում դէպի ռուսների ներկայութիւնը Պամիրում:

ՊԱՐԻԶ, 23 սեպտեմբերի: Նիցցայում կատարվեց Գարիբալդիի արձանի բացումը, Բուվիէ մինիստրի, Գարիբալդիի փեսայ իտալական կանցիօ գեներալի և իտալական ու ֆրանսիական բազմաթիւ պատգամաւորների ներկայութեամբ:

ՀՌՕՄ, 23 սեպտեմբերի: Ուրբաթ դիշերը ֆրանսիացի երեք ուխտաւորներ ցոյց արին Վիկտոր-Էմմանուէլ Թագաւորի գերեզմանի առջև, գրելով Պանտէօնը այցելողների համար գրքում. «Vive le pape», աւելացնելով Թագաւոր խօսքի սկզբնատառը: Իտալացիները սաստիկ վրդովված են այդ ցոյցից: Պապը ինքն պախարակում է այդ: Հռօմում ժողովուրդը պակ դրեց Վիկտոր-Էմմանուէլի գերեզմանի վրա. նահանգներում ցոյցեր են կատարվում ֆրանսիական այդ արարքի դէմ: Թագաւորը հաւանեց ժողովրդի արտայայտած զգացմունքները ֆրանսիացի ուխտաւորների ձեռքով Վիկտոր-Էմմանուէլի յիշատակը վիրաւորելու առիթով և հրամայեց անյապաղ աքսորել ուխտաւորներին Իտալիայի սահմաններից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի: «Нов. Время» լրագիրը լուր է հաղորդում, որ Դանիայի Թագաւորական զոյգը մտադրութիւն ունի հոկտեմբերին այցելել Կրիմ:—Լրագիրները հաղորդում են, որ հոկտեմբերի վերջում կը գործադրվեն կէրսոնը փոխադրելու նոր կազմված սակագները:—Լսվում է, որ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում առևտրական դաշնագիրներ կապելու Իտալիայի և Ֆրանսիայի մէջ:

ՇՏՈՒՏԳԱՐՏ, 25 սեպտեմբերի: Պաշտօնական լրագրում հրատարակված է մանիֆէստ, որով Վիլհելմ II յայտարարում է, որ Թագաժառանգութեան վերաբերեալ օրէնքի հիման վրա ինքն իր ձեռքն է առնում պետութեան ղեկը:

ԼՕՆԴՕՆ, 25 սեպտեմբերի: Այս դիշեր Բրատոնում վախճանվեց իրլանդական կուսակցութեան առաջնորդ Պարնէլ: Ուրբաթ Պարնէլ մրսեց, որից յետոյ սաստիկ յոգացաւ սկսվեց նրա մօտ. մահից մի փոքր առաջ նա ուշքը կորցրեց: Պարնէլի անսպասելի մահը խորին ցաւ պատճառեց Դուբլինում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 սեպտեմբերի: Երէկ ներկայացաւ ֆինանսների մինիստրին պատգամաւորութիւն չորս բանկերի կողմից, և ներկայացրեց մի ադրէս՝ ցանկութիւն յայտնելով ներկայ տարվայ օգուտներից իւրաքանչիւրը 12,500 բուբլի տալ, բոլորը 50,000 բուբլի, յօգուտ սովեալների: Մինիստրը շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորութեանը և մատնացոյց անելով ամեն կողմից ստացվող բազմաթիւ նուիրատուութիւնների վրա, ասեց, որ զեկուցում կը ներկայացնէ Թագաւոր Կայսրին բանկերի մեծահոգի վարմունքի մասին:—«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ բանտային գլխաւոր վարչութիւնը մտադրութիւն ունի ներկայ և եկող տարիների ընթացքում ամեն տեղ աւարտել բանտային բէֆօրմը եւրօպական Ռուսաստանի բոլոր նահանգներում:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

գիրք էի կարդում: Դրանը բախեցին. մտաւ շվէյցարուհի աղախինը և դրեց առջևս մի փոքրիկ ծրար:

—Ո՞ւմից է դա:

—Չը գիտեմ, պարոն, «Zürcher Hof» հիւրանոցի ծառան է բերել:

Ծրարի հասցէն ճիշդ որ իմ անունով էր. դա անկասկած կանացի, թէև ինձ բոլորովին անծանօթ ձեռագիր էր՝ նուրբ, պարզ և գեղեցիկ ձեռագիր....

—Խնդրեցէք ծառային, որ սպասէ, անմիջապէս պատասխան կը տամ, դիմեցի ես աղախնուն:

Ծրարը բանալուն պէս ուղեցի կարդալ նամակը, բայց երկու հանգամանքներ բոպէապէս արգելեցին ինձ կատարել իմ դիտաւորութիւնս. նամակը գրված էր նոյն գեղեցիկ ձեռքով՝ բաց վարդագոյն թղթի վրա և թուղթը անուշահոտ էր....

Բաց վարդագոյն և անուշահոտ թուղթ.—որքան բան են ասում քսան և երեք տարեկան երիտասարդի վառ երևակայութեան....

Ցնական շարժուածք էր երիտասարդի կողմից դեռ նամակը չը կարդացած՝ հոտ քաշել անուշահոտ թղթից.... Նամակը գրված էր ֆրանսերէն լեզուով, անպաճոյճ, հասարակ, բայց գեղեցիկ ոճով: Ահա մօտաւորապէս նրա բովանդակութիւնը.

«Ցարդելի պարոն. Գուցէ դուք մոռացել էք արդէն այն աղջկան, որի հետ պատահմամբ ծանօթացել էիք Նիցցայում, և որին ճանապարհորդակից եղաք մինչև Լիոն քաղաքի կայարանը: Այժմ ես եկայ այստեղ աշնան երկու ամիսներն անցնելու և հանգստանալու իմ սովորական ծանր զբաղմունքներից. սակայն երկիրը և քաղաքը ինձ համար կատարելապէս օտար են. բացի ձեզանից ես ոչ մի ծանօթ չունեմ այս քաղաքում: Գուցէ կը համաձայնվիք նուիրել ինձ ձեր թանգագին ժամանակի մի երկու ժամեր՝ իմ առաջնորդ լինելու այս քաղաքում, որպէս զի ձեր օգնութեամբ ես կարողանայի մի փոքրիկ բնակարան գտնել, ժամանակաւորապէս սարքվել և պիանո ճարել: Ես իմացել եմ «Zürcher Hof» հիւրանոցում և երջանիկ կը լինէի ձեզ տեսնելու, երբ ժամանակը ձեզ կը ներէ դալ ինձ մօտ: Ընդունեցէք կանխապէս իմ սրտագին շնորհակալութիւններս:

Ձեր Էվէլինա Պ.»:

Նամակը կարդալուց յետոյ, չը գիտեմ ինչու, մի արտասովոր յուզմունք էր տիրել սրտիս.... Նա, այդ խեղճ սիրտը, կարծես մի արտակարգ անցքի էր սպասում, կարծես գուշակում էր, թէ կեանքիս մէջ դեռ չեղած մի արկած պիտի պատահէր.... Ես անընդունակ էի զգում ինձ գրել մի որ և է պատասխան, ես որ շատ սիրում էի բարեկամներիս նամակներ գրել և վատ չէի գրում ֆրանսերէն լեզուով:

Դէպի կօրիդօրը տանող սենեակի դուռը բանալով, ես ասեցի հիւրանոցի ծառային, որ գնայ, նամակի պատասխան չի լինի, ես ինքս անմիջապէս կը գամ օրիորդի մօտ:

Ուրեմն ինձ վիճակված է նրան նորից տեսնելու, մտածեցի ես....

—

Մի քանի օրից յետոյ ինձ աջողվեց գտնել օրիորդի համար երեք սենեակներից բաղկացած փոքրիկ և գեղեցիկ մի բնակարան, ես օգնեցի նրան սարքվել, ճարեցի մի պիանինօ նրա համար: Բնակարանը գտնվում էր Ցիւրիխի ամենագեղեցիկ արուարձաններից մինում: Բնակարանի պատուհաններից բացվում էր հրաշալի տեսարան. տունը գտնվում էր մի կանաչազարդ բլուրի վրա, որի տորոտում սփռված էր բուսականութեան մէջ թաղված ամբողջ քաղաքը, իսկ քաղաքի այն կողմը, հեռաւորութեան մէջ, երևում էր գրեթէ ամբողջ Ցիւրիխեան ծովակը....

Էվէլինա ինձ հետ էր շրջում քաղաքում բնակարան որոնելու ժամանակ:

—Ես կը տարեմ մենակ հիւրանոցի սենեակում, ասեց նա իր սովորական գեղեցիկ ժպիտով, դուք թոյլ կը տաք, որ ձեզ հետ ընկերանամ.... Այդպիսով համ ձեր հատարակութիւնը կը վայելեմ, համ էլ կը ծանօթանամ քաղաքի դիրքի հետ....

Երբ նա անցաւ իր նոր բնակարանը և ես հրաժարական էի առնում նրանից, նա խնդրեց ինձ ազատ ժամանակ այցելել իրան: Առաւօտները նա ածում էր, սերտում էր իր պիէսաները, ես էլ զբաղված էի պրոֆէսօրների դասախօսութիւնները լսելով: Ես կարողանում էի մի մի անգամ մտնել նրա մօտ երեկոները միայն: Պատահում էր, որ ես նրան համոզում էի միասին մի զբօսանք անելու:

Աւելի մօտիկ ծանօթանալով Էվէլինայի հետ, ես իմացայ որ նա դաւանութեամբ բողոքական էր և ինչպէս բոլոր բողոքական ֆրանսիացիք, օրիորդն էլ ջոկվում էր միւս ֆրանսիուհիների մեծ մասից՝ իր բազմակողմանի զարգացմամբ: Բողոքական ֆրանսիացիք տարբերվում են կաթոլիկ ֆրանսիացիներից գլխաւորապէս այն ուսումնասէր, լայն և հարցասէր ոգով, որը չէ բաւականանում միմիայն բուն ֆրանսիական քաղաքակրթութեամբ, այլ նրանք ջանում են ընդարձակել իրանց մտաւոր աշխարհի հորիզօնը՝ ծանօթանալով և օտար ազգերի լեզուների, գրականութեան և նրանց քաղաքակրթութեան արգասիքների հետ: Էվէլինա բացի ֆրանսերէնից, կատարելապէս տիրապետում էր անգլերէն և գերմաներէն լեզուներին, ծանօթ էր այդ երկու ազգերի գրականութեան հետ, բացի երաժիշտ լինելուց, նա փոքր ինչ նկարիչ էլ էր, նա միացնում էր իր մէջ ֆրանսիուհու հաճելի, դուրեկան բնաւորութիւնը՝ գերմանուհու լուրջ բարք ու վարքի հետ: Նա անխոնջ աշխատասէր էր՝ անպլիուհու պէս:

Բաւական չէ որ նա իր անձն էր պահում իր աշխատանքով, բայց և իր ձեռք բերած վաստակի մի մասը ուղարկում էր Ֆրանսիայի դաւառական փոքրիկ քաղաքներից մինում ապրող իր ծերունի, անդամալոյծ հօրը, որը բաղդաւորապէս ուրիշ զաւակներ չունէր, թէև դեռ իր առոյգ ժամանակ այրի մնալով երկրորդ անգամ էր պսակվել.... Այդպիսով Էվէլինա ստիպված էր իր սուղ նիւթական միջոցներով ոչ թէ միայն իր հօրը պահել, բայց և իր խորթ մօրը:

(Կը շարունակվի)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի պատուաւոր ընտանիք կամենում է իր մօտ պահել գիշերօթիկ մանուկներ՝ աշակերտներ կամ աշակերտուհիներ։ Ընտանիքի զաւակները—դուստրը՝ աւարտած է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիօնի 8-րդ դասարանը, ընտանեկան դաստիարակչուհու և ընտանեկան ուսուցչուհու դիպլոմով. իսկ որդին՝ առաջին գիմնազիայի 7-րդ դասարանում, կարող են պատրաստել աշակերտներին և աշակերտուհիներին գիմնազիայի մինչև 4-րդ դասարան, նմանապէս կարող են պարապել նրանց հետ և հայոց լեզուից։ Հասցէն հարցնել „Մշակի“ և „Աղբիւրի“ խմբագրատանը։ 1—5

ՄԱՍՍԱԺԻՍՏ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ պարապում է մասսաժով բժիշկների ղեկավարութեամբ։ Աղքատներին ձրի։ Նիկոլաեվսկայա փողոց № 16.

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընդհանուրի գիտութեանը, որ նրա գիւանատանը ստորագրութիւն է բացված յօժարակամ նուիրատուութիւններ անելու Գօրու զաւառի Մետեխի գիւղում հին տաճարը վերանորոգելու համար։ Նուիրատուութիւններ ընդունվում են ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։

1—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Ուրբաթ, 4/16 *հոկտեմբերի դուրս կը գնայ* ԲԱԹՈՒՄԻՑ EBRE (ԷԲՐ) *շոգենաւը, նաւապետ* RANGONE (ՐԱՆԳՕՆ) *դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները։*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, *իսկ* ԲԱԳՈՒԻ *մէջ՝* ԳՕԼԴԼՈՒՍՏ։ 1—2

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՂԶԼԱՐԻ *հայոց երկդասեան* ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ *հրաւիրում է* ԶԵՌԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ 7 *դասի համար դասատուութեան իրաւունք ունեցող* ՎԱՐԺՈՒՀԻ 105 *ռուբլի վարձատրութեամբ։*

1—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *սրանով յայտարարում է, որ այսուհետև ընկերութեանս հետ գործ ունեցողները կարող են դիմել ընկերութեանս գրասենեակը* (Բարոնսկայա *փողոց, տուն* Սահակեանի), *որը բաց է ամեն օր առաւօտեան* 10—2 *ժամը։*

1—3

Ը. *կարգի մի* **ՎԱՐԺՈՒՀԻ** *կամենում է տեղ ունենալ հայ դպրոցներում։ Համաձայն է գնալ ուրիշ թեմ։ Հասցէն „Մշակի„ խմբագրատանը։*

2—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ *դէպի* ԲԱԹՈՒՄ, *չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի* 9/21 *յունվարից սկսած*

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	11/23 սեպտեմբերի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԳ
—	25 սեպտ. (7 հոկտեմբերի)	—	ԱՐՄԵՆԻԱ	— ՏԻԲԱԼ
—	9/21 հոկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ
—	23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)		ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԳ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ *օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։*

Տօմակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ.* Դարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ *պ.* Վիկտոր Դ'ԱՐՆՕԻՆ, *Միջին-փողոցում, Նախկին գեներալ* Տէր-Ասատուրովի *տանը,* ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, *Կոլիբրիակինսկայա հրապարակ, և* ՆՕՎՕՐՕՍԻՑՍԿՈՒՄ *պ.* Լուի Բրնօին։ 6—12 (Ե. շ.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) *Առևտրական տնտեսութիւն,* 2) *Առևտրական թուաբանութիւն,* 3) *Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային),* 4) *Թուաբանութիւն համրիչի վրա,* 5) *Առևտրական թղթակցութիւն,* 6) *Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և* 7) *գեղագրութիւն։*

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնովի *տանը, № 9* Սերգիէվսկայա *և* Նազարնայա *փողոցների անկիւնում, գեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ* ԶՐԻԱՊԷՍ *եղբ. Ծօվիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.*—*ъ* Тифлисъ, С. П. Мануэльянцу.

23—25 (Ե. Շ.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ *վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու* ՄԱՏՉԵԼԻ ԶԵՌՆԱՐԿ *առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։*

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ԶԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 *ռուբ. համար.* 1%-*ից մինչև* 12%։ *Վաճառվում է եղբարց Ծօվիանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ,* Тифлисъ, Нагорная ул., № 9. *Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝* С. П. Мануэльянцу.

Գինն է 1 *ռուբլի։ Փոստի ծախս* 21 *կ. Գրավաճառներին զիջում կը լինի։* 16—150

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

„ՍՈՒՏ ՃԳՆԱՒՈՐ“

Հեղինակութիւն Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆԻ։ *Գինը* 30 *կոպէկ։ Ծախվում է գրավաճառանոցում և հեղինակի այրիի մօտ։ Խնդրվում է այն անձինքներից, որոնց մօտ կան այդ գրքի բաժանորդագրական թերթեր, շտապեն ուղարկել հեղինակի այրիին։*

3—5

ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Ռ. ԿԵՕԼԷՐԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, *Նիկոլսկայա փողոցում։*

Սեփական քիմիական գործարան.

Սեփական տեղատուն.

Մեծ քանակութեամբ և հատով վաճառումն.

Ապրանքների յայտնի լաւ արժանաւորութիւն և թարմութիւն.

Գների յայտնի չափաւորութիւն և պատուէրների կատարման ճշդութիւն։

Հաշուող անձանց համար, որոնք սիրում են կօնֆօրտ և կարգ, իրանց բովանդակութեամբ հետաքրքիր պրէյս-կուրանտները ուղարկվում են ձրիապէս.

Օգտաւէտ և ընդհանրապէս գործածվող մասնաւոր բաղմաթիւ առարկաներ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱԻԱՌՆԵՐՈՒՄ

Ապրանքների ուղարկելը գաւառականների պահանջմամբ կատարվում է պատուիրողների ցանկութեամբ վրադիր վճարով։ 3—5 (№ 2)

Երրորդ կարգի մի **ՈՒՍՈՒՑԻՉ** *կամենում է տեղ ունենալ հայ դպրոցներում։ Համաձայն է գնալու և ուրիշ թեմ։ Հասցէն „Մշակի“ խմբագրատանը։* 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է սրանով, որ ընկերութեանս 1891 *թուի անդամները կարող են ստանալ կենտրոնական գրավաճառանոցից ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.*

1) Տօլստոյ—Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը։
2) Վալտնէր—Հաւատարիմ Սավիտրին։
3) Պէստալոցի—Լինհարդ և Գէրտրուդ։
4) Նալ և Դամայանտի։
5) Ռօզընհարն—Նաւի փոքրաւորը։
6) Սպիրի՝ Ուռենց Ցովսէփ։ 7—13

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՐԴԷՆ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

„ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ“

գրքույկը, որը պարունակում է իր մէջ հեղինակի տասն և մէկ հատ ամենաընտիր վէպիկները։ Գիրքը բաղկացած է մօտ 350 *երեսից, տպված է մաքուր թղթի վրա Մոսկվայում և արժէ՝ Բաթումում—*1 *ռ.* 25 *կոպ., միւս քաղաքներում—*1 *ռ.* 50 *կոպ.։ Մի և նոյն ժամանակ ծախվում է Բաթումում հրատարակչի մօտ նոյն հեղինակի «Ճգնաւոր Եղօ» անունով պատկերը թիւրքահայոց կեանքից, ժողովրդական ընթերցանութեան համար։ Գինն է* 10 *կոպ.։*

Հասցէ՝ Батумъ, Абелу Апресьянцу.

Կարելի է պահանջել առանց փող ուղարկելու, մի բաց նամակով. մենք անմիջապէս կուղարկենք յայտնած հասցէով։

Հրատարակիչ Աբէլ Ապրէսեանց 2—3

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրոնում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա։ Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 *կոպէկից մինչև* 5 *ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում։*

Կերակուրները թարմ և համով։

НОВЫЕ НОМЕРА
„ДАНІЯ“
ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

16—36

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *սրանով յայտնում է իր գիտութիւն, որ վէտերինար Ա. Գ. Մելքումեանը, ձրի պատուաստում է ծաղիկ հասակաւորներին և թէ մանուկներին ամենայն օր առաւօտեան ժամը 7-ից մինչև 10-ը իր սեփական տանը, № 9 և 7, Նօվօ-կաթօլիչէսկի և Աղէքսանդրօվսկի փողոցների անկիւնում,* 9 *քաղաքամասում։* 3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ *յանձն է առնում թարգմանել հայերէն մատչելի պայմաններով, Ֆրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից։ Ունենալով քանի մի ազատ ժամեր պատրաստ է դասաւանդել Ֆրանսերէնը և գերմաներէնը ցանկացողներին։ Նախադասելի են առաւել նոր սկսողները։* 8—10

Դիմել „Մշակի“ խմբագրութեան։

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Сентября 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.